



## ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ\* (375—444)

**Ս. Կյուրեղ Հայրապետի գործերի  
հայերեն թարգմանությունները**

Մեր եկեղեցական-թարգմանական գրականության մեջ չափազանց ընդարձակ և մեծ թիվ են կազմում Կյուրեղ Սկեքսանորբացու գործերից և ուղղակի հունարեն թագրից կատարված թարգմանությունները, որոնցից ունանց սկզբանքերը դեռ չեն հայտնարերված հունական եկեղեցական մատենագրության մեջ:

Ս. Կյուրեղ Հայրապետը ևս թողել է բազմաժան ու մեծարժեք մատենագրական ժառանգություն: Նրա «Երկասփրությանց մեծագույն մասն մը պահված է հան ի մեր մատենագրության, որոնցմէ շատերը թարգմանություն են ութերորդ դարու, ի ձեռն Ստեփանոսի Սյունեցիս. և ոմասը ավելի հնագույն ժամանակաց կվերաբերին, և հավանականարար հինգերորդին: Հույն թագրին ու մեր թարգմանությանց մեջ տեղտեղ կարևոր տարբերությունը կտևանին, ավելի ընդարձակագույն գտնելով զբազիրը մանավանդ Հնգամատյանին, Հեսուս, Դատավորաց և Թագավորությանց մեկնարաւանությանց մեջ: Թերևս բուն հեղինակին ձեռքով և կամ հայլոց համառուված օրինակաց վրա եղած է մեր թարգմանությունը»<sup>48</sup>:

\* Հարուսակված «Էջմիածին» ամսագրի 1977 թ. № Գ-ից:

<sup>48</sup> Մատենադարան, Հայկական թարգմանությանց նախմաց, դար Դ—ԺԴ, Վենետիկ, 1889, էջ 504:

«Ս. Կյուրեղի մի քանի գրվածքները կը կին անգամ են հայերեն թարգմանվել, և երկրորդ թարգմանությունը անկախ չի եղել հայանականության, այլ՝ հայսկինը սրբագրելով»<sup>49</sup>:

Ինչպես ս. Աթանաս Հայրապետի, այնուևս ել ս. Կյուրեղ Ալեքսանորբացու գործերի հայերեն թարգմանության մասին դժվար է հստակորեն ասել, թե ե՞րբ և ո՞ր թարգմանիչ վարդապետների կողմից են թարգմանվել հայերենից:

Սուսագ պատմական տեղեկություններ ունենք միայն ս. Կյուրեղի «Պարապմանց գիրք»-ի հայերեն թարգմանության մասին, Հ դարում, Ստեփանոս Սյունեցու ձեռքով:

Մատենագրական, ձեռագիր Ծաղրնտիրների և պատմական այլ աղբյուրների վկայությամբ մեր թարգմանիչ վարդապետները և և ապա Հ դարերում հայերենին են վերածել Կյուրեղ Ալեքսանորբացու հետևյալ աշխատությունները.

1. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսապետին Աղեքսանորբացու ԱՐԱՐԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ, Եից, Աստացոց, Թուոց և Երկրորդուն օրինաց, Հնգամատենինի գրքերի մեկնություններ:

2. Ի Յեսուս որդույ նաւեայ Կիրդի:

3. Նորին Կիրդի ի դատապրու:

4. Նորին Կիրդի ի թագավորութիւննա:

5. Մեծին Կիրդի Աղեքսանորբացու Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Ղուկաս:

<sup>49</sup> Ամին Բաւարոյ, էջ ԼII:

6. Երանելոյն Կիրդի Աղեքսանդրացոյ Հայրապետին ՄԵԿՆՈՒԹԻՆ ՍԹԱԿԱՅ ԱԼԵՏՈՒՐԱՆՆԻՆ ըստ Ղոկա:

7. Երանելոյն Կիրդի Աղեքսանդրու Հայրապետի և ՄԵԿՆՈՒԹԵՆ ԵՍԱԵՅ ՄԱՐԳԱՐԵՒ:

8. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու և ՄԵԿՆՈՒԹԵՆ ՅՈՎԵԼԵՅ:

9. Ի մեկնորենէ մարգարեին ԶՍ.ՔԱՐԻՒՅ:

10. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու ՅԵԲՐԱՅԵՑԻՈՅ ԹՂԹՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԵՆ:

11. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու Հայրապետին ՊԱ.ՐԱ.Պ-ՄՈՒՆՔ, յաղաօ մարդանալոյ Միածնին:

12. Հաստարիմ քահանայապետի Քրիստոփի, մտերիմ ծառայի Աստուծոյ՝ սրբոյն Կիրդի Աղեքսանդրացոյ ի Տիրերեալ քահանայէ և յեղարց:

13. Տեառն սրբոյն Կիրդի Աղեքսանդրացոյ առ բարեպաշտ թագատըն Թէոդո-սին, յաղաօ տաենի սրբոյ Զատկի:

14. Երանելոյն տեառն Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացոյ առ բարեպաշտ թագուին Եւդոքիա, կին Թէոդուի բարեպաշտ թագատիրի:

15. Յաղագու հնազանդութեան Քրիստոսի:

16. Յաղագու սրբելոյն Քրիստոսի և նորին քահանապուրեան իմացելոյ:

17. Յաղագու ասեղոյն փառ առնով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

18. Յաղագու ասեղոյն յառնել Քրիստոսի ի մերելոց փառաք Հօր:

19. Յամայթ հակառակորդացն ասացեալ. «Այժմ անձն իմ խորվեալ է»:

20. Նորին տեառն Կիրդի եպիսկոպոսապետի առ բարեպաշտ թագուին կուսան-սրբ Քրիստոսի քոյր ուղղափառ թագատուրին Թէոդոսի Արքայեալ և Մարինեալ:

21. Սրբոյն Կիրդի Աղեքսանդրի եպիսկոպոսի առ բարեպաշտ թագատըն Թէովուեսու, յաղագու ուղղափառ հաւատու, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

22. Նորին Կիրդի Աղեքսանդրու առ բարեպաշտ թագատիրին Թէովուիսու, յեղուանապոյն ի բանկութիւնս իրեաց եկեւպըն ի սուրբ ժողովոյն Եփեսուի:

23. Երանելոյն Կիրդի եպիսկոպոսի Աղեքսանդրի թէ մի է Քրիստոս, զոր խընդեաց Երեմիաս, ընդէմ ամբարտին Նեստորի:

24. Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Սուկեսու եպիսկոպոսի Դիոմիդիրեալ բաղադրի Խուրացոյց գաւառի, ուույր առաջնին, յուղը Երկրորդ:

25. Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Ակակիոս եպիսկոպոսի Սաղատի (Մելիտինի):

26. Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի պատասխանի թղթոյն առ Յովհաննես եպիսկոպոս Անտիոքաց:

27. Վկայութիւնը յանդիմանութեան ամբարտին Նեստորի:

28. Սիրելեաց և փափաքողաց Անատուսու: Մարտինիանեալ Յովհաննեսու և այլոց ուղղափառ հարց միայնակեցաց և որոց ընել ձեզ միայնական ճգնին վարս, հաւատով Աստուծոյ սերտացելոյ Կիրդի եպիսկոպոսի ի Տէր խնդալ:

29. Մեկնորին հաւատոյն որ յընդհանրական եկեղեցին միշտն ասի, զոր կարգեցին սուրբ հարքը ի Նիկիացոց ժողովնե:

30. Երանելոյն Կիրդի եպիսկոպոսին Աղեքսանդրի խոսք ի սուրբ Աստուծածինն, ասացեալ ի ժողովն Եփեսուի ընդդէմ չարափառին Նեստորի:

31. Նորին ի սուրբ Աստուծածինն և ի միշտ կոյսն Մարիամ ընդդէմ Նեստորի:

32. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսի առ Նեստոր զի տայր նմա տեղի ապաշխարութեան, յաղաօ քան զմերժին նորա յեպիսկոպոսութենին չև և էր լիեալ սուրբ Սիրենուու, որ կամօքն Աստուծոյ ժողովեցան յեփեսու, յուղը Կիրդի առ Նեստորի<sup>50</sup>:

33. Նորին Կիրդի եպիսկոպոսի Աղեքսանդրացոց առ Նեստոր հայիոյիշ:

34. Երանելոյն տեառն սրբոյն Կիրդի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացոյ, գիրք որոյ անոն Գանձ է:

35. Աղօքք սրբոյն Կիրդի Աղեքսանդրացոյ ասացեալ է վասն զղման և սրտաւաց:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ծեռագրերի Մատենադարանում էլ պահվում են ս. Կյուրեղ Աղեքսանդրացոյ մատենագրական վաստակն ամփոփող թագում ծեռագրեր<sup>51</sup>:

#### Ս. Կյուրեղ Հայրապետի հայերեան տպագիր աշխատությունները

Կյուրեղ Աղեքսանդրացոյ մատենագրական վաստակի հայերեան առաջին տպագրությունը հրա մեծարժեք «Գիրք Պարապմանց» աշխատության հրատարակությունները:

<sup>50</sup> Այս թղթին ապա կցված են Նեստորի դև Կյուրեղ Հայրապետի 12 նորվեները:

<sup>51</sup> Մատենադարան հայկական թագմանութեանց հախնեաց, Վենետիկ, (Դար Ժ—ԺԳ), 1889, էջ 503—524:

<sup>52</sup> Յուցակ ծեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևան, 1965, հատոր Ա, «Կյուրեղ Աղեքսանդրացի», էջ 1515, հատոր Բ, 1970, էջ 1342:

է, կատարված 1717 թվականին Կ. Պոլսում<sup>53</sup>:

Կյուրեղ Ալեքսանդրացու սույն աշխատությունը, ինչպես նաև նրա հայերենի թարգմանված այլ գրքերը նայ եկեղեցու դավանաբանական պատմության համար հանդիսացել են առաջնակարգ և շատ կարևոր աղբյուրներ: Հայ դավանաբանները միշտ ս. Կյուրեղի գրվածքները օգտագործել են իրենց հականառողջությունների մեջ, ողջափառությունը պաշտպանելիս:

Հայ եկեղեցին միշտ էլ սերու եկեղեցական, մատենագրական հարաբերությունների մեջ է եղել Ալեքսանդրիայի Աթոռի հետ: Այս իսկ պատճառով մեր թարգմանական գրականության մեջ շատ կարևոր տեղ են գրավում և մեծ թիվ են ներկայացնում Ալեքսանդրիայի Աթոռի ողջափառ հայրապետների, այդ թվում մանական և Արամակ և ս. Կյուրեղ Ալեքսանդրացու գրքերի հայերեն թարգմանություններն ու տպագրությունները:

Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց»-ը ըստ ձեռագիրների հիշատակարանների և Ստեփանոս արքեակ. Օքքելյանի (1260?—1304) վկայության, թարգմանվել է Կ. Պոլսում 715 թվականին. «Թարգմանեցան Գիրքս Պարապմանց և թողոց սրբոյն Կիրոյի եպիսկոպոսապետին Ալեքսանդրիայի, ի սուոց օրինակացն, ի Կոստանդնովապետի, ի ձեռն Դայի հիպատոսի և թագարական սեղամի Կենակի և ի ձեռն Ստեփանոսի քերթողի՝ աշակերտի Մովսիսի Սինեաց եպիսկոպոսի»<sup>54</sup>:

Ըստ Օքքելյանի վկայության, Ստեփանոս Սյունեցին Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց» և «Գանձք» աշխատությունները գտնում է Կ. Պոլսի արքայական մատենադարանուն, ողջափառ եկեղեցական հայրերի այլ երկերի հետ. «Եւ ան գտեա մատենաս ուկեսան սուրբառ սուրբ հարցն վասն ողջափառ հայտոյ» և ապա գետմ է Հռոմ «և զանձն ան այլ ևս երից մատենաս» և թարգմանելոյն դրանք իր հետ բերում է Դիլինի հայրապետանց<sup>55</sup>:

«Գիրք Պարապմանց»-ը տպագրվում է 1717-ին Կ. Պոլսում, Աստվածատուր Համարացի (1715—1725) «Բահանաբարպետի և Ընդհանուր Հայոց Մեծաց կաթողիկոսի»

<sup>53</sup> Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցանկ, 1512—1800, Երևան, 1963, էջ 78, Կյուրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլսի, տպ. Աստվածատուր Կ. Պոլսից, Ըժ (800) էջ:

<sup>54</sup> Մատենադարան, Եղինը, էջ 519, նաև Մեսրոպ վարդ. Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, Բեյրութ, 1958, էջ 30—31:

<sup>55</sup> Նույնը, էջ 519—520:

օրով և նրա հրամանով, «Տիրաշէն Աթոռույն Էջմիածնաց» ողարկիած ընտիր մի ձեռագրի հիման վրա: Մայր Աթոռից հայոց կաթողիկոսի կողմից ողարկված տուփի մեջ եղել են Կյուրեղ Ալեքսանդրացու «զերիս գրեանս, գանցուցն, զՊարապմանցն, և վլուծուն նորին»<sup>56</sup>:

Աստվածատուր կաթողիկոսը Մայր Աթոռից սոյն երեք ձեռագրերը ողարկում է Կ. Պոլսի Հովհաննես Կողու մեծանոն պատրիարքին (1715—1741) տպագրության համար, հետևյալ գծեցիկ և բովանդակալից ընձարականությ. «Են նրաստ ծառայս ի Քրիստոս, Տէր Աստվածատուր Հայոց Մեծաց կաթողիկոս, ի տիեզերանուշակ Աթոռու սուրբ Էջմիածնի, դասանակից գորով վասն ամենայնի առ Կիրողու Աստվածաբար Հայոց մեր երանելի, և առ սուրբ Վարդապետն Գրիգոր Տաթևացի. Կերեակ հրաման արքի ըստամբեկ զուրբ Գիրքս Գանձոց և Պարապմանց ընդ Լուծմանց, որք առ ամենասուրբ Երրորդութիւնն և տօնօքնութիւնն Քրիստոսի Աստվածաբարանն, աստվածանանյ և ողջափառ դատակութեամբ»<sup>57</sup>:

Տպագիր «Գիրք Պարապմանց»-ը, որը սովորական անվանաթերթ չունի, բացվում է «Պարապար դպրի» «Զայն ստ Բաղձակին» ձուով, որին հաջորդում է, հավանաբար, նոյն Պարապար դպրի «Աստոնդով հանելերձ բան առ վերծանուղար բարեմիտ» բովանդակալից և հոգեբոլիս Հայաշարանը՝ հետևյալ բառերով. «Զոր արար սուրբն Կիրեղ այրու երանելի ընդդեմ մարդադաւան Նեստորի շարաբաստին թշոտի, որում ցուցանի հասատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ողջափառութեանն ասհանաց»<sup>58</sup>:

Այնուհետև գրքի 19—490 օջերում տպագրվել են Կյուրեղ Ալեքսանդրացու հետևյալ 44 ճառերը.

Գլուխ Ս. Թէ զինչ նշանակէ Քրիստոս անոն:

Գլուխ Բ. Զինչ եղանակա պարտ է իմանակ և հմանուկ:

Գլուխ Գ. Զինչ է Յիսուս.

Գլուխ Դ. Ընդէ՞ր ասի մարդ՝ Բանն Ասուունոյ.

Գլուխ Ե. Ընդէ՞ր ասի ունայնացեալ Բանն Ասուուն:

Գլուխ Զ. Զիա՞րդ մի է Քրիստոս.

Գլուխ Է. Զիա՞րդ մի է հմանուկը.

<sup>56</sup> Հիշատակարան սոյն գրքի տպագրության, էջ ԷջԴԱ—ԷջԴԲ (791—792):

<sup>57</sup> Հիշատակարան տպագրության, էջ ԷջԴԲ (792):

<sup>58</sup> Հայաշարան, էջ Բ—Ժ:

**Գլուխ Ը.** Զիա՞րդ ասեմք լինել զմիութիւն.  
**Գլուխ Թ.** Յաղագ կայծական որ է յա-  
րացոյ Քրիստոսի.

**Գլուխ Ժ.** Ցերոս երգոց... ևս ծաղկեալ  
դաշտաց շուշան հովտաց.

**Գլուխ ԺԱ.** Զի թէն ի միաւրութիւն ճշշ-  
մարիս եկեալ առ մարդկութիւնն, անչփոյ  
մնացին գոյացութիւնքն.

**Գլուխ ԺԲ.** Զի Աստուած գոլով Բանն,  
ևն մարդ.

**Գլուխ ԺԳ.** Զի Յիսոս Քրիստոս ասի  
մարդ եղեալ Բանն Աստուծոյ.

**Գլուխ ԺԴ.** Յարացոյցը յԱստուածաշունչ  
գոյց թէ եկաց մնաց յԱստուծոյ Բանն, և  
յետ մարդանալոյն Աստուած.

**Գլուխ ԺԵ.** Ի նոյն խորհուրդ.

**Գլուխ ԺԶ.** Այլ ի նոյն խորհուրդ.

**Գլուխ ԺԷ.** Զի ոչ աստուածազգեատ մարդ  
էր Քրիստոս, և ոչ ի մարդ բնակեցաւ Բանն  
Աստուծոյ, այլ յաւետ զի եղի մարմին, այ-  
սինքն կատարեալ մարդ ըստ գոյց.

**Գլուխ ԺԸ.** Խորհրդածութիւն վասն այսր.

**Գլուխ ԺԹ.** Բանք առաքելականք, որովք  
Աստուած անուանի Քրիստոս.

**Գլուխ Խ.** Այլ՝ զի Աստուած է Քրիստոս.

**Գլուխ ԽԱ.** Զիա՞րդ պարտ է իմանալ  
զբանն մարմին եղն և բնակեցաւ ի մեզ.

**Գլուխ ԽԲ.** Զիա՞րդ իմասցի Աստուածա-  
ծին՝ կոյսն.

**Գլուխ ԽԳ.** Վկալութիւնք յաղագ Քրի-  
ստոսի.

**Գլուխ ԽԵ.** Զի Աստուած անուանի և  
մարդ՝ երեւալ Միածինն.

**Գլուխ ԽԵ.** Յաղագ չարչարանացն Քրիս-  
տոսի. Եւ թէ՝ պիտոյ է այլն այլ ի վերայ  
միոյ ասել և նորին, և ոչ անջատել յերկուս.

**Գլուխ ԽԶ.** Սո այնոսիկ որք ասեն թէ  
միայն վերաբերութեամբ վայելեն Աստուծոյ  
մարդկօրէնքն.

**Գլուխ ԽԸ.** Թուղթ ի Տիբերեալ քահանա-  
յէ և յեղբարց առ Կիրեն (վասն այլ և այլ  
խնդրոց).

**Գլուխ ԽԸ.** Լուծմունք սրբոյն Կիրոյի  
խնդրոցն Տիբերեալ.

**Գլուխ ԽԹ.** Թուղթ սրբոյն Կիրոյի առ բա-  
րեպաշտ յագաւորն Թէոդոսիոս, յաղագ  
տօնի սրբոյ Զատիկին.

**Գլուխ ԽԼ.** Թուղթ սրբոյն Կիրոյի առ բա-  
րեպաշտ թագուհին Եւղենիա, կին՝ Թէոդո-  
սի բարեպաշտ յագաւորի.

**Գլուխ ԽԱ.** Յաղագ հնազանդութեան  
Քրիստոսի.

**Գլուխ ԽԲ.** Յաղագ սրբելոյն Քրիստոսի  
և նորին Քահանայութեանն իմացելոյ.

**Գլուխ ԽԳ.** Յաղագ ասելոյն վասու  
առ Տեսոն մերոյ Յիսոսի Քրիստոսի.

**Գլուխ ԽԵ.** Յաղագ ասելոյն յառնել  
Քրիստոսի ի մեռելոց վասոր Հօր.

**Գլուխ ԿԵ.** Յամօթ հակառակորդացն ա-  
սացեալ.

**Գլուխ ԼԶ.** Թուղթ սրբոյն Կիրոյի առ միշտ  
կուանան՝ քորս ուղղափառ թագաւորին  
Թէոդոսի, Արկադիա և Մարինա, և վկայու-  
թինք սրբոց Հարցն.

**Գլուխ ԼԱ.** Թուղթ սրբոյն Կիրոյի, առ թա-  
գաւորն Թէոդոսի, յետ դառնալոյ ի սուրբ  
ժողովոյն (Եփեսոսի).

**Գլուխ ԼԲ.** Թուղթ սրբոյն Կիրոյի, թէ՝ մի՛  
է Քրիստոս զոր խնդրեաց Երեմիա ընդդմն  
Նեստորի.

**Գլուխ ԽԱ.** Թուղթ (Ա.) սրբոյն Կիրոյի առ  
Սեկունդոս, եպիսկոպոս Դեռկերտոսայ քա-  
ղաքի Սուրբացոց գաւառի.

**Գլուխ ԽԱ.** Թուղթ (Բ.) Նորին Կիրոյի  
առ Սեկունդոս եպիսկոպոսուն.

**Գլուխ ԽԲ.** Թուղթ սրբոյն Կիրոյի առ  
Սկակիոս Մելիսինոյ եպիսկոպոսուի, յորժամ  
զեկոյց նման թէ զիարդ գրեաց յարնելեայս.

**Գլուխ ԽԳ.** Թուղթ սրբոյն Կիրոյի, պա-  
տասխանի թղթոյն առ Յօհաննէս եպիսկո-  
պոս Անտիոքու մեծի, քանզի կամեր շահել  
զա, զի զնեատորին խորհիլ Յովհաննէս.

**Գլուխ ԽԴ.** Վկալութիւնք ի սրբոց Հարցն  
եպիսկոպոսաց, զոր ժողովեաց ի յոլովից  
ճանից սուրբն Կիրեն, առ ի յանդիմանու-  
թին անքարչութեանն Նեստորի.

**Գլուխ ԽԵ.** Թուղթ սրբոյն Կիրոյի, առ  
Նեստոր, զի տայր նման տեղի ապաշխա-  
րութեան, յառաջ քան զմերժիլ նորա ե-  
պիսկոպոսութեանէն, զի չն ևս էր լեալ սուրբ  
Սիմեոնոսն որ կամօքն Աստուծոյ ժողովե-  
ցաւ յափեսու.

**Գլուխ ԽԶ.** Նորին Կիրոյի եպիսկոպոսի  
Աղեքանդրացոյ, առ Նեստոր հայթոյին,  
ճառ ԺԲ նզովից, և մեկնութիւն:

Այսուեղ, 490-որ էջում ավարտվում է Պա-  
րապմանց գրքի բովանդակությունը. «Կա-  
տարեաց Պարապմունք Աստուծով» (էջ  
490):

«Գիրք Պարապմանց»-ից հետո, 491—506  
էջերում, տպագրվել է ս. Աթանասի թուղթը  
կորնթացիների Եպիսկոպոսն եպիսկոպոսին  
րուղյա «Յաղագ ուղղափառ հասատոյ», և  
որին հաջորդում է «Յանկ սրբոյ մատենիս»  
և «Յիշատակարան» Խաչատոր վարդապե-  
տի, «Գիրք Պարապմանց»-ի մեր եկեղեցու  
և ուղղափառության համար ունեցած պատ-  
մական մեծ հշանակության մասին, «որ  
յաղթական է համացից դիաչունչ հերձ-  
ուածողացն դասուց, մանաւանդ՝ չարա-  
հնարն Նեստորի և թիր իմաստն Եւսի-  
քեալ, զորս քարամբք աստուածաշունչ կա-  
պարծի հերք և ի բաց հանէ յեկեղեցուու

գալիք որպէս զգալի ապականիչս հօտին Քրիստոսի և հաստատէ զանանշատ և զանշփոթ միատրութիւն միոյ Որդոյն Սատուծոյ Յիսոս Քրիստոսի, Փրկչին մերոյ»:

«Գիրք Պարապմանց»-ը գրվել է «ամենայն ընդդիմողական առարկութեանց առ ի կարկուն և ի պապանուն երկարեակ աղուեարարոյ փետոնաբառակ (բզեզ, միջատ) եերձուածողաց» և հանդիսացել է «Զատ անշիշանելի, խաչ լուսառու Հայուեկեցոյ, ճշմարտախոն, ուղղադասան մերոյին հաւատոյ»<sup>59</sup>:

Գրի 522—523 էջերում տպագրվել են Պաղեասար դպրի երկու ոստանալոր ձևերը Կյուրեղ Ալեքսանդրացուն նիյրված:

«Գիրք Պարապմանց»-ի 529—764 էջերում տպագրվել է և Գրիգոր Տաթևացու «Լուծունք ի Պարապման սրբոյն Կիրրի» և նորարակ և հմտալից մեկնությունը:

Տաթևացին նախ բացատրում է, թե Կյուրեղ Ալեքսանդրացու սույն աշխատությունն ինչո՞ւ է կոչվում «Գիրք Պարապմանց». «Նախ քան զամենայն գիտելի է զիա՞րդ է կոչի Գիրք Պարապման, վասնի իրաքանչիւր եերձուածողաց ի տեօրէնութիւնն Քրիստոսի՝ ամենայն բանիցն երանելի սուրբն Կիրրեղ ի մատենիս լի և անժերի ի պատաժանիս եղև պարապեալ, վասն այնորիկ ասի Գիրք Պարապմանց» (էջ 529):

Այնուհետև սույն հասորի 529—764 էջերում տպագրվել է և Կյուրեղ Հայրապետի «Պարապմանց գրքի» 44 ճառերի վրա զբաժ և Գրիգոր Տաթևացու՝ «աշակերտի Յոհաննու Որոտեցոյ քաջ հուսորի» «Լուծունք»-ը, հոյակապ մի մեկնություն, աստվածաբարական - քրիստոսաբարական, սկելողական, եկեղեցագիտական խոր գիտելիքներով և ողղափառ վերլուծություններով հագեցած «ոչ ամենենին ընդ անկուն ընթացեալ ուիի, այլ սակա ինչ հաւաքալ ի քրտաց առաջնոր Հարցն և իր ինչ ի լուսար բանից կուսարչին մերոյ և զրովանդակին իսկ լուսատաձեւն շնորհաց»:

Տաթևացին «Գիրք Պարապմանց»-ի «Լուծունք»-ը գրել է «Փ պէս բեմասացութեան և ի կարօս զրուցատրութեան» և «միայն զողովական տեսութիւնն» Եերկայսցներու մոտահոգությամբ, «քազմաշխատ ամօք ընծայեցի զաս եկեղեցոյս Հայատահայց»:

«Յիշատակարան տպեցման սրբոյ մատենիս»-ում կարդում ենք, որ «քրիստոսա-

նկար, լուսակառոց, երկնահանելիս Արոռոյն էջմիածնի, արի և սանձափ Վեհապետին և սրբազն Քահանապատին Տեսուն Սաստուածատրոյ ընդհանուր Հայոց Մեծաց կաթողիկոսի» հրամանով է տպագրվել «Գիրք Պարապմանց»-ը:

Հայ եկեղեցու և Աթաւասից նեսոն միայն Կյուրեղ Ալեքսանդրացու գրվածքներն են կանոնական նեղինակություն ստացել:

Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք Պարապմանց»-ն ու «Գամձար» գրքերը շատ հարգի են եղել մեզանում, հաճախ արտագրվել են, ուսուցման և լուծմանց առարկա են դարձել<sup>60</sup>:

Մայր Արտօփ միարան Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան) «Կնիք հասառոյ» ժողովածոնի հրատապկության առջիվ իր զրած «Ներածություն»-ում նշում է, որ այդ ժողովածոնում, «Ա. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերից բաղկած վկայությունները ամենից ընդարձակ տեղի են գրավում մեր ժողովածոնի մեջ»<sup>61</sup>:

Սույն ժողովածոնում կան Կյուրեղ Ալեքսանդրացու բազում գործերից վկայություններ և ամբողջական աշխատություններ. «Ի սուրբ Երրորդութիւնն» (էջ 51), «Ի մեկնութեան կերպակցոց թղթոյն» (էջ 156—167), «Ի մատենեն որ առ թագուհին» (էջ 170—177), Ղուկասու, Հովհաննեսու Ավելատաբաներից, Սուաքելական և Ընդհանրական թղթերից հասկած-մեկնություններ (էջ 177—205), «Ի Բանեն որ յաղագ ներմարդութեան» (էջ 205—210), «Ի շրջանական թղթոյն», որ զնեսորդ» (էջ 210—211), «Մեկնութիւն հասառոյ, որ Յժմ» (318) Հայրապետացե» (էջ 211—229), «Երլուտասան նզովիք» Նեսորի դեմ, «Նզովը և մեկնութիւն» (էջ 229—241), «Ի գանձէն» (էջ 279—280), «Ի մատենեն որ առ թագուհին» (էջ 356), «Յերրայեցոց զիստին» (էջ 364—366):

Կյուրեղ Ալեքսանդրացու մի այլ ընդարձակ աշխատություն «առ նեսոր զի տար նաև տեղի ապաշխարութեան յառաջ բաներմին նորա, զի չեւ և եւ լեալ սուրբ Միննուդու որ կամարճ Աստուծոյ ժողովեցան յԵփեսոս, թուոյ Կիրոյի առ Նեսոր» տպագրվել է «Գիրք թղթոց»-ում<sup>62</sup>:

«Կանոնը Կիրրի Ալեքսանդրացույ» (գլուխ Ե) տպագրվել է «Կանոնագիրք հայոց»-ում (հասոր Բ, Երևան, 1971, աշ-

<sup>59</sup> Յիշատակարան սրբոյ մատենիս, Խաչառորդ վարդապետ, էջ 515—516:

<sup>60</sup> Նույնը, «Յիշատակարան լուծմանց», էջ 764—765:

<sup>61</sup> Կնիք հասառոյ, էջ Լ. Ա.:

<sup>62</sup> Նույնը:

<sup>63</sup> Գիրք թղթոց, Մատենագիտութիւն Խախեաց, Թիֆլիս, 1901, էջ 369—406:

խատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, էջ 59—61, և «Մանրագրություններ», էջ 327, նաև «Հայոց եկեղեցու իրավունք», Ա գիրք, Շուշի, 1903, էջ 253):

Մեր եկեղեցին տարին երկու անգամ տոնում է հիշատակը և Կյուրեղ Ալեքսանդրացու: Առաջինը՝ հունվար ասավա մեջ՝ և Աթանաս Հայրապետի հետ<sup>64</sup>, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի մեջ՝ «Սրբոց երկոտասան վարդապետաց» տոնի առիթով<sup>65</sup>:

<sup>64</sup> Օրացույց, և. Էջմիածին, 1977, էջ 38:

<sup>65</sup> Նույնը, էջ 182:

Ս. Կյուրեղը եղել և մնում է Ալեքսանդրիայի Աթոռի և ընդհանուր քրիստոնեական եկեղեցու մեծահանճար և ամենից մեծ հեղինակություն վայելող հայրապետներից մեկը, մանավանդ «Եփեսոսի ժողովից հետո ոչ մի առ ժողով և դավանական որոշում չընդունող մեր եկեղեցվո համար»<sup>66</sup>:

Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

<sup>66</sup> ԿՅԻՐ ԲԱԱՏՈՅ, Կարապետ Խաչ. (Տեր-Մկրտչան), էջ ԼII:

